# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 7-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի երրորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11-ի N 7-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ԵՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*1.ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՀՏԶ Ախ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅՔԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԾՐԱԳՐԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-020-0117-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.5217 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0305-0003 ԵՎ 06-112-0008-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*6.ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*7.ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՆԱՄ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

8.ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

9.ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆ ՆՈՆԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

10.ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 8-Ա**

## ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՀՏԶ ԱԽ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅՔԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԾՐԱԳՐԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի,13-րդ հոդվածի 10-րդ մասի, 92-րդ հոդվածի 4-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին Օձուն համայնքի կողմից ներկայացված և ՀՏԶ ԱԽ-Ի կողմից հավանության արժանացած «Վերամշակող արտադրության կազմակերպում՝ հանուն համայնքի զարգացման» ծրագրի արտաբյուջետային նախահաշիվը 12729000 /տասներկու միլիոն յոթ հարյուր քսանինը հազար /ՀՀ դրամ գումարով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվականի, N 9-Ա**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-020-0117-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.5217 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ և 80-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերի, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերի, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատան, համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության վկայական թիվ 17022022-06-0032, գաղտնաբառ՝ AKDYRZRSPBYZ), Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-020-0117-0031 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի 0,5217 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել ժամանակավոր օգտագործման:

Հողամասը վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրել հրապարակային սակարկություններով՝ բաց մրցույթով, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տասներկու հազար (12000) ՀՀ դրամ:

3. Հողամասը գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված հողամասերի ցանկում:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով այն նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝

1) Հողամասի վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):

2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝***

| **Կողմ ( 6 )** | **Դեմ ( 0 )** | **Ձեռնպահ ( 0 )** |
|---|---|---|

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվականի, N 10-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի , 47-րդ և 51-րդ հոդվածների

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական թիվ 22022022-06-0031, գաղտնաբառ՝ 1ATSYV3DIUAH), Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0322-0003 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 1.23816 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել մեկ միլիոն հինգ հարյուր հազար (1500000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական թիվ 10022022-06-0030, գաղտնաբառ՝ QUVMN5ARCMIM), Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0310-0123 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 3.600391 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել չորս միլիոն չորս հարյուր հազար (4400000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական թիվ 10022022-06-0031, գաղտնաբառ՝ AV1ETVVQDFNA), Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0310-0128 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 0.580004 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել չորս հարյուր հազար (400000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական թիվ 22022022-06-0056, գաղտնաբառ՝ EYH1NY23VPD2), Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0322-0005 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 3.333177 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել երեք միլիոն ինը հարյուր հազար (3900000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

5. Համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական թիվ 29062016-06-0019, գաղտնաբառ՝ IMVAGHK4ET8B), Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0310-0122 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 3.500462 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել չորս միլիոն չորս հարյուր հազար (4400000) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

6. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության,

ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

7. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

8. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվականի, N 11-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0305-0003 ԵՎ 06-112-0008-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 66-րդ և 72-րդ հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող (սեփականության վկայական թիվ 07032022-06-0035, գաղտնաբառ՝ UE4881GHI3VC), համայնքի վարչական տարածքում՝ գյուղ Այգեհատ 10-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող, 06-014-0305-0003 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1 հեկտար մակերեսով փաստացի առկա սահմանազատված հողամասը և հողամասում կառուցված 130.9 քառակուսի մետր մակերեսով շինությունը՝ անավարտ բնակելի տունը (այսուհետ՝ անշարժ գույք) իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, ուղղակի վաճառքի կարգով օտարել այն օրենքով գնման նախապատվության իրավունք ունեցող անձին՝ Հերմինե Սարգսի Շահվերդյանին, անշարժ գույքի՝ վճարման պահին գործող, կադաստրային արժեքն ամբողջությամբ միանվագ վճարելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող (սեփականության վկայական թիվ 09032022-06-0059, գաղտնաբառ՝ 2UUVBWIFPHPR), համայնքի վարչական տարածքում՝ գյուղ Օձուն 5-րդ փողոց, թիվ 2/2 հասցեում գտնվող, 06-112-0008-0048 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00859 հեկտար մակերեսով փաստացի առկա

սահմանազատված հողամասը և հողամասում կառուցված 24.7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 24.3 քառակուսի մետր մակերեսով մառանը և 7.1 քառակուսի մետր մակերեսով մառանը՝ (այսուհետ՝ անշարժ գույք) իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, ուղղակի վաճառքի կարգով օտարել այն օրենքով գնման նախապատվության իրավունք ունեցող անձին՝ Սամվել Աշոտի Սարգսյանին, անշարժ գույքի՝ վճարման պահին գործող, կադաստրային արժեքն ամբողջությամբ միանվագ վճարելու պայմանով:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով անշարժ գույքը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

2) Հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի ուղղակի վաճառքի կարգով օտարելու հետ կապված հարաբերությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 12-Ա**

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 164-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 631-Ն որոշման, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ավագանու կողմից ընդունված 06.02.2018 թվականի N 13-Ա որոշման երկրորդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված 1
Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11
N 12–Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| | |
|---|---|
| 1. Հարություն Գալստյան | Օձունի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ, |
| 2. Արմինե Միքայելյան | Օձուն համայնքի ղեկավարի տեղակալ, |
| 3. Նաիրա Վարդանյան | Օձունի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ |
| 4. Աղաբեկ Մոսինյան | Օձուն համայնքի ավագանու անդամ |
| 5. Անահիտ Աղիկյան | «Օձունի Հովհաննես Օձնեցու անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն |
| 6. Սիրվարդ Բոչոյան | «Օձունի Հովհաննես Օձնեցու անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատակից |
| 7. Սիլվա Խեչումյան | «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակից |
| 8. Աստղիկ Դավիթավյան | Օձունի համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ սոցիալական աշխատող |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվականի, N 13-Ա**

## *ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության <<Հարկային օրենսգրքի>> 19-րդ հոդվածի, ,,Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահամանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

*Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝*

*1.Սամսոն Շահվերդյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:*

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11 N 13-Ա որոշման

# ՍԱՄՍՈՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** |
| 1 | Սամսոն Շահվերդյան | Լոռու մարզ գ. Այգեհատ փող 4, տ 7 | գ. Այգեհատ | տնամերձ 0.286, վարելահող 1.189 հա, | | S0250466 | **49640** | հարկից ազատում | | 2009թ. հողի հարկի տույժ | **5996** |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | **5996** |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | **5897** |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | **4980** |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | **2535** |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | **5996** |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | **5811** |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | **3019** |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | **3038** |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | **3786** |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | **1519** |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | **1067** |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***49640*** | | | | ***49640*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 14-Ա**

***ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՆԱՄ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

1.Սանամ Ղուլյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11-ի N 14-Ա որոշման

## ՍԱՆԱՄ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Սանամ Ղուլյան | Լոռու մարզ գ. ՕՁՈՒՆ փող 2,փակուղի 2, տ 3 | գ. Օձուն | տնամերձ 0.148, վարելահող 0.464 հա, խոտհարք 0.113 | | 137931132 | **21165** | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | **3067** |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | **1309** |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | **2790** |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | **3885** |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | **3885** |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | **3681** |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | **85** |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | **1546** |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | **1** |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | **916** |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***21165*** | | | | ***21165*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 15-Ա**

***ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

1.Ռոբերտ Կոստանդյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավել
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11-ի N 15-Ա որոշման

# ՌՈԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** |
| 1 | Ռոբերտ Կոստանդյան | Լոռու մարզ գ. ՕՁՈՒՆ փող 12, տ 5 | գ. Օձուն | տնամերձ 0.135 | | 13791076 | **11557** | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | **1015** |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | **942** |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | **793** |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | **831** |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | **577** |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | **294** |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***11557*** | | | | ***11557*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 16-Ա**

## *ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆ ՆՈՆԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

1.Սուսան Նոնինյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

| Կողմ ( 6 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ (0 ) |
| --- | --- | --- |
| Տ. ԱՂՎԱՆՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| Ա. ՄՈՍԻՆՅԱՆ | | |
| Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ | | |
| Ա. ՏԻՍԱՆՅԱՆ | | |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՍԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ... ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ОДЗУН ... RA LORI REGION ODZUN MUNICIPALITY ... 08954259

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11-ի N 16-Ա որոշման

# ՍՈՒՍԱՆ ՆՈՆԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Սուսան Նոնինյան | Լոռու մարզ գ. Այգեհատ փող 4, տ 7 | գ. Այգեհատ | տնամերձ 0.135, վարելահող 1.832 հա, | | 13636095 | 12326 | հարկից ազատում | | 2015թ. հողի հարկի տույժ | 6038 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 3133 |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | 2583 |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | 403 |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | 76 |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | 93 |
| | *Ընդամենը* | | | | | | *12326* | | | | *12326* |

Համայնքի ղեկավար Ա.Տիտանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 մարտի 2022 թվական, N 17-Ա**

## *ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահամանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայասփանի Հանրապեփության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

1.Անահիտ Քիքանյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( 6 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0 )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 11-ի N 17-Ա որոշման

# ԱՆԱՀԻՏ ՔԻՔԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | Հարկատուի նկատմամբ կիրառված, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամիսը, ամսաթիվը, տարին | Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (ՀՀ դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները: | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** |
| 1 | Անահիտ Քիքանյան | Լոռու մարզ գ. Օձուն փող 6, տ 18 | գ. Օձուն | տնամերձ 0.066, վարելահող 0.0506 հա, | | 13676956 | **11227** | հարկից ազատում | | 2008թ. հողի հարկի տույժ | **2042** |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | **496** |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | **496** |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | **496** |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | **498** |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | **496** |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | **496** |
| | | | | | | | | | | 2015թ. հողի հարկի տույժ | **2042** |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | **1895** |
| | | | | | | | | | | 2017թ. հողի հարկի տույժ | **40** |
| | | | | | | | | | | 2018թ. հողի հարկի տույժ | **755** |
| | | | | | | | | | | 2019թ. հողի հարկի տույժ | **881** |
| | | | | | | | | | | 2020թ. հողի հարկի տույժ | **594** |
| | ***Ընդամենը*** | | | | | | ***11227*** | | | | ***11227*** |

Համայնքի ղեկավար՝ Ա.Տիտանյան